

Գրագողության դրսևորումները հայաստանյան Ինտերնետ միջավայրում

Համացանցը գնալով ավելի մեծ տեղ է գրավում մեր կյանքում եւ գործունեության մեջ: Սա մի անսահման հանրագիտարան է, որտեղ կարելի է ժամեր ծախսել անհրաժեշտ կամ պարզապես հետաքրքիր տեղեկություն գտնելու համար: Բայց հաճախ այցելելով տարբեր կայքեր՝ տեսնում ենք, որ մեր գտած հոդվածները կամ նյութերը մեկը մյուսին շատ նման են: Այստեղ գործ ունենք գրագողության հետ: Խմբագիրներն ամեն օր դժգոհում են, որ իրենց կայքի կամ թերթի հեղինակային նյութերը, լուսանկարները, վիդեոնյութերը հայտնվում են այլ լրատվամիջոցներում՝ հիմնականում առանց հեղինակի եւ լրատվամիջոցի անվան հիշատակման, հղման: Ընդ որում՝ նյութերի անօրինական արտատպմամբ զբաղվում են գրեթե բոլորը՝ չնչին բացառություններով: Տպագիր լրատվամիջոցները՝ ինտերնետային կայքերից, կայքերը՝ թերթերից, հեռուստաընկերությունները՝ կայքերից, բլոգները՝ կայքերից եւ հակառակը, բայց ավելի շատ կայքերը՝ միմյանցից, եւ ոչ միայն տեքստ, լուսանկարներ, այլեւ տեսանյութեր, քանի որ մուլտիմեդիան լայն հնարավորություններ է ստեղծել այդ առումով: Այսպես հոդվածները մի հրատարակությունից հայտնվում են մյուսում:

Գողացված նյութի անօրինական տիրաժավորման արդյունքում հաճախ հնարավոր չէ գտնել սկզբնաղբյուրը: Նյութերի մի մասն արտատպվում է առանց որեւէ փոփոխության, երբեմն փոխում են վերնագիրը կամ տեքստում կատարում «փոքրիկ խմբագրումներ»: Գրագողությունը դարձել է լրագրողական գործունեության անբաժանելի մասը համացանցում եւ հիմնական խնդիրներից մեկը: Գրագողերին թվում է, թե Ինտերնետի իրավական չկարգավորվածության պայմաններում այս տարածքում ամեն ինչ թույլատրելի է, ով ինչպես ուզենա՝ կվարվի:

Գրագողությունն ի հայտ չեկավ Ինտերնետի հետ: Նախկինում էլ հնարավոր էր պատճենահանման սարքի կամ դրանից առաջ՝ ձեռքով արտագրման միջոցով սեփականացնել այլոց ստեղծագործությունները, բայց այն ժամանակ գոնե պետք էր փնտրել գրադարաններում կամ արխիվային փաստաթղթերում, կարդալ, վերաշարադրել նախադասությունները, որը երեւակայության ինչ-որ տեղ էր թողնում: Սակայն այսօր Ինտերնետը հնարավորություն է տալիս պատճենահանել առանց կարդալու, նրանց՝ ովքեր մտածում են, որ այն, ինչ Ինտերնետում է, ոչ ոքի չի պատկանում:

Գրագողությունը ուրիշի ստեղծագործությունը որպես սեփական ներկայացնելն է կամ ուրիշի ստեղծագործության անօրինական հրապարակումը քո անվամբ, այլ կերպ՝ հեղինակության յուրացումը: Այն ծագել է լատիներեն *Plagium* բառից, որ նախնական նշանակությամբ ուրիշի ստրուկների առեւանգումը եւ վաճառքն էր, իսկ իրավական իմաստով՝ ուրիշի ստեղծագործության կամ դրա մի մասի անօրինական հրապարակումը սեփական անվամբ:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ առանց հեղինակի կամ հեղինակային իրավունքի այլ իրավատիրոջ համաձայնության և առանց հեղինակային վարձատրության, սակայն հեղինակի անվան և սկզբնաղբյուրի պարտադիր նշումով թույլատրվում է գիտական, հետազոտական, բանավիճական, քննադատական և տեղեկատվության նպատակով օրինական ճանապարհով բացահայտված ստեղծագործության **քաղվածքների** բնագիր կամ թարգմանաբար մեջբերումը, այդ թվում՝ թերթերի և ամսագրերի (պետք է նկատի ունենալ նաև էլեկտրոնային լրատվամիջոցները, թեև դրանք հիշատակված չեն) հոդվածներից **քաղվածքների** վերարտադրումը՝ մամուլի տեսության ձևով՝ մեջբերման նպատակն արդարացնող ծավալով: Հենց այս ձևակերպման՝ **մեջբերման նպատակն արդարացնող ծավալով**, չընկալումը կամ անտեսումն է գրագողության կամ տպագիր ծովահենության ծավալների աճի պատճառը: Մեջբերման նպատակն արդարացնող ծավալը հայկական լրատվամիջոցները, մասնավորապես՝ առցանց, «հասկանում են» որպես նյութի ամբողջական ծավալ: Ընդ որում՝ ամբողջական ծավալով վերարտադրում են ոչ միայն տեղեկատվական բնույթի նյութերը, որոնք տեսականորեն կարող էին գրվել նման ձևով, եթե օգտագործել են տեղեկատվության միեւնոյն աղբյուրները, այլև վերլուծական հոդվածները, խմբագրականները կամ սյունակները, որոնք ակնհայտորեն տվյալ հեղինակի մտածողության, աշխարհընկալման արտահայտությունն են եւ մտավոր սեփականության իրավունքով պաշտպանվող ստեղծագործություն: Թարմ օրինակ է Mediamax.am-ի սյունակագիր Արա Թադեոսյանի սյունակներից մեկի արտատպումը 1in.am-ի կողմից: Չնայած այն հանգամանքին, որ արտատպումն արվել է հղումով՝ 1in.am-ն իրավունք չունի այն հրապարակել առանց հեղինակի կամ կայքի ղեկավարության համաձայնության, որովհետեւ սյունակները կամ խմբագրականները լրատվամիջոցի այցեքարտն են, արտահայտում են նրա դիրքորոշումը կամ խմբագրական քաղաքականությունը եւ ապահովում ընթերցողների կոնկրետ զանգված: Ուստի, մրցակցության կամ այլ նկատառումներով կայքի համար կարող է անցանկալի լինել դրա արտատպումը:

Մեր կարծիքով՝ խնդրի խորացման պատճառներից մեկը գրագողության սահմանման անորոշությունն է: Իրավական տեսանկյունից գրագողությունը տեքստի ուղիղ յուրացումն է, մինչդեռ թեմաների, գաղափարների, դրվագների յուրացումը գրագողություն համարվել չի կարող: Ստացվում է, որ ներկայումս լրագրողը կարող է ներկա չգտնվել իրադարձությանը, նստել համակարգչի առջեւ, լրատվական գործակալությունից կամ այլ աղբյուրներից վերցնել լուրը եւ այն այնպես շարադրել, որ նյութի ներքո հնարավոր լինի գրել սեփական անունը: Սրանով պայմանավորված՝ Ինտերնետ արդյունաբերության մեջ զարգանում է լրագրության երկու ուղղություն՝ rewright եւ copyright: Առաջինը բնորոշում է լրագրողի այնպիսի գործունեությունը, երբ վերջինս նյութեր է գրում՝ առաջնորդվելով աղբյուրներով կամ հղում անելով

աղբյուրներին: Նա հանգիստ կարող է օգտագործել աղբյուրի ինֆորմացիայից վերցրած հատվածներ, նախադասություններ: Միակ բանը, որ չի թույլատրվում, նյութի ամբողջական պատճենումն է: Երկրորդի դեպքում հեղինակը չի առաջնորդվում աղբյուրներից ստացված ինֆորմացիայով եւ ստեղծում է միայն հեղինակային նյութեր: Նման նյութեր ներկայումս դժվար է գտնել, քանի որ լրագրողների կողմից էթիկայի նորմերի համատարած խախտումների արդյունքում այս երկու տեսակները միաձուլվում են: Կորչում է «բացառիկ հարցազրույցների» եւ առհասարակ բացառիկ նյութերի իմաստը, որովհետեւ հանկարծ «բացահայտում ես», որ սենյակում քեզնից ու զրուցակցից բացի այլ «լրագրող» էլ է եղել:

Copy/paste-ի այս արատավոր պրակտիկան հանգեցրել է լրագրողների ծուլությանը, նրանց մասնագիտական որակների կորստին: Անհասկանալի է խմբագիրների կամ տնօրենների պահվածքը, որոնք վճարում են ջանք չթափող, սեփական նյութեր չպատրաստող լրագրողներին: Եվ արժե նման խմբագիրներին հիշեցնել, որ գողացված նյութերը իրենց համար կարող են ինչպես ժամանակավոր հաջողություն ապահովել, այնպես էլ լուրջ կամ զավեշտալի պատմությունների մեջ գցել: Ահա նման մի օրինակ մեր իրականությունից: **Վերջերս ՀՌԱՀ-ը տուգանեց «Արմենիա» հեռուստաընկերությանը «Ալա բալա նիցա» ֆիլմը գովազդելու ընթացքում գովազդի սահմանափակումների մասին օրենսդրական նորմերը խախտելու համար:** Այդ առիթով ՀՌԱՀ-ը նիստ էր գումարել, որին ներկա էր եղել միայն aravot.am-ի լրագրողը: Նիստը լուսաբանելիս լրագրողը վրիպել էր և տույժի չափը սխալ էր նշել: Կայքում նյութի տեղադրումից մի քանի րոպե անց այս ինֆորմացիան, առանց սկզբնաղբյուրին հղման, տեղադրվեց asekose.am և 1sur.am կայքերում: aravot.am-ն անմիջապես ուղղեց իր սխալը, իսկ գրագողություն կատարած կայքերը՝ միայն այն բանից հետո, երբ գրագողության փաստը նկատած aravot.am-ի խմբագիր Աննա Իսրայելյանն իր ֆեյսբուքյան էջում «ընկերական» գրառում-կոչով հանդես եկավ՝ ուղղված լուրեր գողացող կայքերի խմբագիրներին:

Համացանցում գրագողության «օբյեկտ» ամենից շատ դառնում են լուսանկարները: Դրանց հեղինակների իրավունքները համատարած կերպով են խախտվում: Չի օգնում նաեւ լուսանկարի վրա տեղադրվող watermark-ը, որը պարունակում է հեղինակի անունը կամ լրատվամիջոցի անունն ու տարբերանշանը, քանի որ տեխնիկական եղանակով կտրում են կայքի կամ հեղինակի անվանումը լուսանկարից և օգտագործում առանց հղման: Ճարահատյալ՝ որոշ կայքեր watermark-ը տեղադրում են լուսանկարի մեջտեղում, որ կտրելու պարագայում այն այլևս օգտագործման համար պիտանի չլինի:

Ինչպես պաշտպանվել կամ պայքարել գրագողության դեմ

Համացանցում ստեղծագործությունները անօրինական օգտագործումից պաշտպանելու համար իրավատերերն օգտագործում են հեղինակային իրավունքի ծանուցման՝ © նշանը: Իրենց կայքերում հրապարակում են «Օգտագործման կանոններ», որտեղ հստակ նկարագրվում է, թե երրորդ անձը ինչպես կարող է օգտվել կայքի բովանդակությունից, եւ ինչ սահմանափակումներ կան: Ձավեշտն այն է, որ նման ծանուցումներ առաջին հերթին ունեն հենց գրագողությամբ աչքի ընկնող կայքերը: Ահա մեր փոքրիկ դիտարկման արդյունքում առանձնացված նման կայքերը՝ asekose.am, mamul.am, haylur.am, 11ur.am, copypaste.am, news.am, 1in.am, կարծում եմ՝ ցուցակը կարելի է շարունակել... Ընդ որում՝ այցելությունների թվով սրանցից ոմանք վարկանիշային աղյուսակներում զբաղեցնում են առաջին հորիզոնականները: Բայց գրագողերին այս կանոնները, բանավոր կամ գրավոր թույլտվության պահանջները քիչ են հետաքրքրում: Որովհետեւ իսկապես սեփական բովանդակություն ստեղծող լրատվամիջոցները ռեսուրսներ չունեն մշտական մոնիտորինգ իրականացնելու, թե ով, երբ եւ ինչ արտատպեց իրենց կայքից՝ առանց թույլտվության: Թեւեւ կարելի է օգտվել որոնողական համակարգերից, որոնք բովանդակության եզակիությունը որոշող գործառույթ ունեն: Օրինակ՝ Ռուսաստանում ստեղծվել է antiplagiat.ru համակարգը, որն օգնում է հետեւելու լրագրողական ստեղծագործությունների անօրինական պատճենահանմանն Ինտերնետում:

Ուրիշի ստեղծագործությունը յուրացնողներին թվում է, որ վատագույն դեպքում իրենց կզանգահարեն կամ կգրեն, իրենք կհանեն հողվածք եւ վերջ: Ներողություն կխնդրեն կամ հակառակը՝ կկոպտեն՝ մտածելով, որ ապացույցներ հնարավոր չեն ներկայացնել: Մինչդեռ մինչ հողվածք հանելը կայքից կարելի է այն տպել կամ Print Screen-ով պահպանել, հետո նոտարով վավերացնել եւ գնալ դատարան: Կարծում եմ՝ հայաստանյան առցանց լրատվամիջոցներից մեկը մի օր պետք է դիմի դատարան՝ նախադեպ ստեղծելու եւ դաս տալու ուրիշի հաշվին հեղինակություն ստեղծողներին եւ շահույթ ստացողներին: Պայքարի մյուս եղանակը արգելափակող ծրագրեր օգտագործելն է, որոնք կանխում են կայքի բովանդակության ավտոմատ պատճենումը: Համառոտների դեպքում կարելի է դիմել գրագողություն կատարողի պրովայդերին՝ բողոքելով անբարեխիղճ հաճախորդից: Այս պարագայում պրովայդերը կարող է փակել այդ կայքը կամ դադարեցնել հոսթինգի մատուցման ծառայությունները, բայց միայն՝ դատարանի որոշմամբ:

Սակայն առաջարկված տեխնիկական կամ իրավական լուծումները մեծ հաշվով արդյունք չեն տա, եթե առցանց լրատվամիջոցները, ինչպես եւ ավանդականները, չցանկանան առաջնորդվել մասնագիտական բարձր չափանիշներով: Նման պահանջներ նրանց պետք է առաջադրի ընթերցողը/այցելուն, որի՝ մեղիաների ոլորտում

գրագիտության մակարդակը (media literacy) գնալով բարձրանում է: Սրան կարող է նպաստել գրագողության դեպքերի հրապարակայնացումը եւ քննարկումը սոցիալական ցանցերում եւ այլ հարթակներում՝ մասնագիտական անագնավորություն որակելով եւ դատապարտելով դրա ցանկացած դրսեւորում:

Վերջում մի հետաքրքիր փաստի հիշատակում խմբագիրների եւ լրագրողների համար. «The Washington Post» թերթի խմբագրությունը աշխատանքից հեռացրել է երկար տարիների փորձ ունեցող իր լրագրողներից մեկին այն բանից հետո, երբ խմբագիրները պարզել են, որ լրագրողի վերջին երկու լրատվական հոդվածների հիմնական մասը առանց հղումների վերցված է ուրիշ թերթից: Իսկ հաջորդ օրը թերթի խմբագիրը սյունակում ներողություն է խնդրել ընթերցողներից:

Լիանա Սայադյան